ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM

Համարը	N 08-Ն	*Տեսակը*	Հիմնական
Տիպը	Հրաման	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	Միասնական կայք 2023.02.20-2023.03.05 Պաշտոնական հրապարակման օրը 20.02.2023	*Ընդունման վայրը*	Երևան
Ընդունող մարմինը	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար	*Ընդունման ամսաթիվը*	15.02.2023
Ստորագրող մարմինը	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար	*Ստորագրման ամսաթիվը*	15.02.2023
Վավերացնող մարմինը		*Վավերացման ամսաթիվը*	
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	21.02.2023	*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

Կապեր այլ փաստաթղթերի հետ
Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՀՐԱՄԱՆԸ ՀՀ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԴԱՍԱԳՐՔԵՐԸ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՅԼ ՆՅՈՒԹԵՐԸ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

15 փետրվարի 2023 թ. N 08-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԴԱՍԱԳՐՔԵՐԸ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՅԼ ՆՅՈՒԹԵՐԸ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրակրթության մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 26.15-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով՝

Հրամայում եմ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության հանրակրթական ծրագրեր իրականացնող հաստատություններում դասագրքերը և ուսումնական այլ նյութերը գործածության երաշխավորելու կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2012 թվականի դեկտեմբերի 14-ի «Հանրակրթական, այդ թվում՝ նախադպրոցական, ուսումնական հաստատություններում օգտագործվող ձեռնարկների փորձաքննության և գործածության երաշխավորման կարգը հաստատելու մասին» N 1144-Ն հրամանը:
3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Նախարար՝

Ժ. Անդրեասյան

Հավելված
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարի 2023 թվականի
փետրվարի 15-ի N 08-Ն հրամանի

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԴԱՍԱԳՐՔԵՐԸ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՅԼ ՆՅՈՒԹԵՐԸ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐԵԼՈՒ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) կողմից հանրակրթական, այդ թվում՝ նախադպրոցական, ուսումնական հաստատություններում՝ անկախ դրանց կազմակերպաիրավական ձևից և ենթակայությունից (այսուհետ՝ Հաստատություն) օգտագործվող դասագրքերի, ձեռնարկների՝ ուսումնաօժանդակ նյութերի և ուսումնադիտողական պարագաների, ուսումնամեթոդական ուղեցույցների, ուսումնամեթոդական գրականության, ուսումնադիդակտիկ նյութերի, շտեմարանների, թեստերի, վարժությունների և խնդիրների ժողովածուների, քրեստոմատիաների, ինչպես նաև մանկական և դպրոցական գրականության (այսուհետ՝ Ուսումնական նյութ) փորձաքննության և գործածության երաշխավորման հետ կապված հարաբերությունները:

2. Դասագրքերի ստեղծումը և փորձաքննությունը իրականացվում են Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի հունիսի 9-ի N 20-Ն հրամանով սահմանված պահանջներին համապատասխան:

3. Ուսումնական նյութի փորձաքննությունը՝

1) նախադպրոցական կրթության ոլորտում յուրաքանչյուր տարիքային խմբի կրթական ծրագրի, ուսումնական, ուսումնամեթոդական և ուսումնաօժանդակ ձեռնարկի, ուսումնադիտողական և նախադպրոցական կրթական ծրագրի ապահովմանը միտված այլ նյութի՝ նախադպրոցական կրթության պետական չափորոշիչներին ու կրթական ծրագրերի մեթոդաբանությանը համապատասխանության գնահատման գործընթաց է,

2) հանրակրթության ոլորտում Ուսումնական նյութի՝ հեղինակային բնօրինակի (թարգմանական օրինակի) վերլուծության գործընթաց է, որի նպատակը համապատասխան նյութին ներկայացվող պահանջներին հեղինակային բնօրինակի (թարգմանական օրինակի) համապատասխանության բացահայտումն է:

4. Փորձաքննության ներկայացված աշխատանքն Ուսումնական նյութի որևէ տեսակին համապատասխանությունը որոշելիս՝ հիմք են ընդունվում հանրակրթության, այդ թվում՝ նախադպրոցական կրթության բովանդակությունը, ուսուցման գործընթացը կանոնակարգող իրավական ակտերը, մանկավարժական, գիտական գրականության մեջ ընդունված սահմանումները, հասկացությունները, ձևակերպումները և սույն կարգի դրույթները:

5. Փորձաքննության ներկայացվող աշխատանքի ընդհանրական պահանջներն են.

1) Ուսումնական նյութը պետք է համապատասխանի հանրակրթության, այդ թվում՝ նախադպրոցական կրթության պետական չափորոշչի պահանջներին,

2) Ուսումնական նյութը պետք է ներկայացնի միայն ստույգ, գիտականորեն հաստատված և ճշգրիտ տեղեկատվություն, վարկածների վերաբերյալ տեղեկատվության ընդգրկման պարագայում՝ հստակ նշում պարունակի այդ մասին, օգտագործվեն միայն գիտականորեն շրջանառվող վարկածներ,

3) Ուսումնական նյութի մեջ պետք է ապահովված լինեն պատշաճ հղումները (այդ թվում՝ էլեկտրոնային հասցեների հղումներ) օգտագործված բոլոր նյութերին և աղբյուրներին,

4) Ուսումնական նյութը պետք է հնարավորություն ընձեռի բազմակողմանիորեն ծանոթանալու ներկայացվող թեմային և նպաստի սովորողի մոտ դրա վերաբերյալ սեփական դիրքորոշման ու կարծիքի ձևավորմանը,

5) սովորողներին ուղղված Ուսումնական նյութը պետք է լինի մատչելի՝ համապատասխանելով տվյալ տարիքի սովորողի լեզվամտածողությանը, խուսափելով մասնագիտական և գիտական եզրույթների անհարկի գործածումից, երկարաշունչ նախադասություններից՝ կիրառելով հասկանալի բովանդակությամբ նախադասություններ, ներառի և՛ պարզ, և՛ բարդ օրինակներ, վարժություններ՝ ըստ անհրաժեշտության,

6) մանկավարժական աշխատողներին ուղղված Ուսումնական նյութը պետք է համապատասխանի նրանց մասնագիտական զարգացման կարիքներին,

7) Ուսումնական նյութի մեջ պետք է ըստ անհրաժեշտության օգտագործվեն տեղեկատվության փոխանցման

տարբեր եղանակներ՝ տեքստային, պատկերային, գրաֆիկական, թվային, խաղային, հանելուկային, բեմականացման և այլ՝ փոխլրացման և համադրման սկզբունքով՝ խուսափելով անհարկի կրկնություններից:

6. Փորձաքննության արդյունքում կազմվում է փորձագիտական եզրակացություն: Փորձագիտական եզրակացությունն ընդգրկում է փորձաքննության ներկայացված Ուսումնական նյութի ամբողջական վերլուծությունը՝ ներառելով փաստարկներ և հիմնավորումներ հեղինակային աշխատանքի՝ հանրակրթության, այդ թվում՝ նախադպրոցական կրթության պետական չափորոշչի պահանջներին, ուսումնական հրատարակության բովանդակությանը և կառուցվածքին ներկայացվող չափանիշներին և ցուցիչներին (գիտականություն, մատչելիություն, մանկավարժական, մեթոդական, լեզվառճական և այլ բնութագրիչներ) համապատասխանության վերաբերյալ:

7. Ուսումնական գրականության փորձաքննությունն իրականացնում է «Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն» հիմնադրամը (այսուհետ՝ ԿԶՆԱԿ)՝ իր մասնագետների, մասնագիտական խմբերի, բարձրագույն մասնագիտական, նախնական և միջին մասնագիտական կրթություն իրականացնող ուսումնական հաստատությունների համապատասխան ստորաբաժանումների (ամբիոններ) մասնագետների, հանրակրթական, նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների և ըստ անհրաժեշտության ՀՀ գիտական, գիտահետազոտական կազմակերպությունների գիտաշխատողների ներգրավմամբ:

8. Նախարարությունը կարող է Ուսումնական նյութի փորձաքննությունը պատվիրել և իրականացնել նաև այլ կազմակերպությունների միջոցով՝ սույն կարգի պահանջներին համապատասխան:

II. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ, ԴԱՍԱԳՐՔԵՐԸ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԸ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

9. Սույն կարգի 1-ին կետում թվարկված Ուսումնական նյութի տեսակները ԿԶՆԱԿ (իսկ սույն կարգի 8-րդ կետի դեպքում՝ այլ կազմակերպություն) փորձաքննության են ներկայացվում հեղինակի (հեղինակների), հրատարակչի, պետական պատվերով նախատեսվածների դեպքում՝ Նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից:

10. Փորձաքննությունը վճարովի է (բացառությամբ Նախարարության կողմից ներկայացվածի), 1 մամուլի համար՝ 15000 ՀՀ դրամ:

11. Աշխատանքը (թղթային և էլեկտրոնային տարբերակով) Պատվիրատուից ստանալուց հետո ԿԶՆԱԿ-ը (իսկ սույն կարգի 8-րդ կետի դեպքում՝ այլ կազմակերպություն) 30-օրյա ժամկետում իրականացնում է փորձաքննություն և կազմում փորձագիտական եզրակացություն: Անհրաժեշտության դեպքում փորձաքննության ժամկետը կարող է երկարաձգվել մինչև 15 օրով՝ այդ մասին տեղեկացնելով Պատվիրատուին՝ նշելով երկարաձգման պատճառները և ժամկետը:

12. Փորձագիտական եզրակացությունը Պատվիրատուի կողմից ներկայացվում է Նախարարություն, բացառությամբ պետական պատվերով նախատեսվածների, որոնք Նախարարություն են ներկայացվում ԿԶՆԱԿ-ի (իսկ սույն կարգի 8-րդ կետի դեպքում՝ այլ կազմակերպության) կողմից:

13. Սույն կարգի 11-րդ կետով սահմանված ժամկետում փորձաքննությունն ավարտելուց հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում, փորձագիտական եզրակացությունն ուղարկվում է Պատվիրատուին: Բացասական եզրակացության դեպքում կցվում է նաև հիմնավորումը:

14. Պետական պատվերով ներկայացված Ուսումնական նյութի փորձագիտական բացասական եզրակացությունն ստանալուց հետո Նախարարությունը 5 աշխատանքային օրվա ընթացքում այն վերադարձնում է հեղինակին՝ կցելով փորձագիտական եզրակացությունը:

15. Փորձագիտական եզրակացության վերաբերյալ անհամաձայնությունների, դիտողությունների, առարկությունների դեպքում Պատվիրատուն այն ստանալուց հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում, կարող է դիմել փորձաքննությունն իրականացնող կազմակերպություն՝ կրկնակի փորձաքննություն իրականացնելու նպատակով՝ սույն կարգի պահանջներին համաձայն:

16. Դասագրքերը երաշխավորված են համարվում Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի հունիսի 9-ի N 20-Ն հրամանով սահմանված փորձաքննության բովանդակային գնահատման փուլն անցնելու դեպքում, որոնք Հաստատություններում կարող են օգտագործվել որպես ուսումնաօժանդակ նյութ:

17. Փորձագիտական դրական եզրակացությունն ստանալուց հետո՝ 7 աշխատանքային օրվա ընթացքում, Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարը ներկայացված Ուսումնական նյութը հրամանով երաշխավորում է գործածության:

Պաշտոնական հրապարակման օրը՝ 20 փետրվարի 2023 թվական: